ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման հետ կապված ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.09.2019թ.10:30-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան/գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հրանտ Հովսեփյան/գնահատող/
	Արմեն Հակոբջանյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան/բացող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/44» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	«Ուրբան Յունիթ» ՍՊԸ	info@urban-unit.com
2	«Ակուռատ Գրուպ» ՍՊԸ	info@accurate.am
3	«Հերմես» ՍՊԸ	hermes.ltd@mail.ru

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 «Հերմես» ՍՊԸ-ի և «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 «Ակուռատ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես. վերջինիս կողմից հայտով ներկայացված ծառայությունների մատուցման համար պահանջվող լիցենզիաները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Ուրբան Յունիթ» ՍՊԸ		«Հերմես» ՍՊԸ		«Ակուռատ Գրուպ» ՍՊԸ	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ					
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	5400000	4450000	5340000	3580000	3580000	3500000	3500000

6. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ակուռատ Գրուպ» ՍՊԸ»-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. սեպտեմբերի 30-ին ժամը 14:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 30.09.2019թ. ժամը 14:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան/գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հրանտ Հովսեփյան/գնահատող/

Արմեն Հակոբջանյան /գնահատող/

Խորեն Մնացականյան/բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

8.1 «Ակուռատ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ակուռատ Գրուպ» ՍՊԸ-ին:

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հերմես» ՍՊԸ-ին:

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

10.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 9-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

10.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց և առաջին տեղ զբաղեցրած կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կ.Սիմոնյան /նախագահ/

---------- Հ. Հովսեփյան

---------- Ա.Հակոբջանյան

---------- Խ.Մնացականյան

---------- Ա.Ստեփանյան

---------- Ա.Սիմոնյան /քարտուղար/